ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/20

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Դեագա» ՍՊԸ-ի 06.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Դեագա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դեագա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 14.06.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Աբովյանի համայնքի մանկապարտեզների կարիքների համար սննդամթերք ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/29» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ, (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Դեագա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը՝ որպես ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքեր, ներկայացրել է հետևյալը.

1. Մանկապարտեզներից պատվերները ընդունվում են միայն ու միայն էլ. փոստի միջոցով:

20.02.2017թ.՝ համաձայն պահանջագրերի «Դեագա» ՍՊԸ-ն իրականացրել է մատակարարում՝

ա) տավարի ոսկորոտ միսը թիվ 5-րդ, 6-րդ, 9-րդ մանկապարտեզներին.

բ) տավարի փափուկ միսը թիվ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ, 12-րդ մանկապարտեզներին:

2. Աբովյան համայնքի ղեկավարի 21.02.2017թ. Ե-365 գրությամբ՝ վերցվել են տավարի մսի նմուշներ թիվ 2-րդ և 3 մանկապարտեզներից:

3. Նմուշառումը կատարվել է առանց Ընկերության ներկայացուցչի ներկայության:

4. Ընկերության համար անհայտ է, թե երբ է նմուշառումը կատարվել և մինչ այդ միսը ինչ պայմաններում է պահվել և որքան է եղել մսի քաշը:

5. Նմուշառման մեջ նշված չի եղել մսի տեսակը՝ ոսկորոտ, թե փափուկ:

6. Մանկապարտեզներում ապրանքները ընդունվում են իրենց կողմից ստեղծված հանձնաժողովի միջոցով՝ տնօրեն, տնտեսվար, բժիշկ: Տվյալ դեպքում հանձնաժողովը ինչու է ընդունել է փորձաքննության արդյուքի բառերով՝ «կասկածելի թարմությամբ և խտաստիճան հոտով» միսը: Ընդունել է, այլ ոչ ետ վերադարձվել՝ պահանջելով ողջամիտ ժամկետում մատակարարել տեխնիկական բնութագրին համապատասխան միս: Բացի այդ, յուրաքանչյուր մատակարարման ժամանակ «Դեագա» ՍՊԸ-ն գրավոր հարցում է կատարում ընկերության կողմից մատակարարված ապրանքի որակի և աշխատանքների վերաբերյալ:

7. Փորձաքննության պատասխանը եղել է 22.02.2017թ., սակայն այդ թվում նաև բողոք ներկայացրած մանկապարտեզները տավարի մսի ձեռքբերման պահանջագրեր են ուղարկել և ստացել են:

8. 20.02.2017թ. բողոք ներկայացրած թիվ 2 և 3 մանկապարտեզները ստացել են միայն փափուկ միս, նմուշավորման ուղարկվել է միայն փափուկ միսը, ուրեմն ինչու է պայմանագրի լուծարումը ներկայացվել երկու չափաբաժնով, տավարի փափուկ և տավարի ոսկորոտ մսի համար: Նաև պայմանագրեր են կնքվել յուրաքանչյուր մանկապարտեզի համար առանձին ծածկագրով ու առանձին տուժանքի համաձայնագրերով, ուստի ինչու չի լուծարվում միայն 2-րդ և 3-րդ մանկապարտեզների հետ, այլ համայնքապետարանի որոշելով բոլոր մանկապարտեզների հետ: Այդ ընթացքում հրատապ գնում կատարելու ընթացակարգով եղել է մրցույթ, և վերջապես 12.04.2017թ. կայացավ հիմնական մրցույթ այդ երկու չափաբաժնով: Մասնակցեց նաև «Դեագա» ՍՊԸ-ն, բայց ներկայացված հայտը անհիմն մերժվեց Աբովյանի համայնքապետարանի հանձնաժողովի կողմից, պատճառաբանելով, որ իրենց կողմից արդեն միակողմանի լուծարվել է այդ չաձաբաժիններով պայմանագիրը (կից արձանագրության թիվ 2-ի պատճենը):

Ընկերությունը ի լրումն բողոքում նշված հիմքերի, գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն պայմանագրերի 1.1 կետի՝ վաճառողը պարտավորվում է, նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսնված ժամկետներում /հավելված 2/ Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

Հիմք ընդունելով պայմանագիրը, Ընկերությունը յուրաքանչյուր շաբաթ, համաձայն պայմանագրի, գնորդին մատակարարել է թիվ 31 և 32 չափաբաժինները՝ տավարի միս, տեղական ոսկրոտ և տավարի միս, տեղական փափուկ:

Որևէ անգամ ապրանքը ընդունող տնտեսվարի կամ մեկ այլ անձի կողմից բողոք պահանջ չի ներկայացվել ապրանքի որակի կամ քանակի վերաբերյալ:

21.02.2017թ. փորձաքննության է ուղարկվել «Դեագա» ՍՊԸ-ի կողմից մատակարարվող մսի՝ Աբովյանի թիվ 2 և 3 մանկապարտեզներից վերցված նմուշները: Համաձայն 22.02.2017թ. թիվ 465 անասնաբուժական փորձաքննության եզրակացության՝ մսի N2 և N3 նմուները և նրան համապատասխանող խմբաքանակը պիտանի չեն օգտագործման համար:

Ընկերությունը՝ այն մասին, որ նշանակվել է անասնաբուժական փորձաքննություն, տեղեկացել է միայն օրեր անց 28.02.2017թ. ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանի թիվ Ե-459 գրությամբ: Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն դիտավորյալ Ընկերությանը զրկել են փորձաքննությանը մասնակցելու և դիրքորոշում հայտնելու հնարավորությունից:

Ընկերությունը նշել է որ, փորձաքննությունը կատարվել է ոչ թե ապրանքը մատակարարելու օրը, այլ մեկ օր անց, երբ անհայտ է, թե այդ մեկ օրվա ընթացքում միսը ինչ պայմաններում է պահվել, ինչպիսի ջերմային ռեժիմ է ապահովվել:

Ընկերությունը գտնում է, որ եթե մատակարարված օրը միսը ունենար այնպիսի տեսակային հատկանիշներ ինչպիսին հիշատակվում է փորձաքննության եզրակացության մեջ, տնտեսվարները այն չէին ընդունի և համապատասխան փաստաթղթի տակ չէին նշի լավ տարբերակը և չէին ստորագրի, իսկ մանկապարտեզներն էլ դրա դիմաց վճարում չէին կատարի:

Ընկերությունը նշել է, որ փորձաքննության եզրակացությունը ստանալուց օրեր անց՝ 09.03.2017թ. ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավար Վահագն Գևորգյանը թիվ Ե-519 գրությամբ հայտնել է, որ Աբովյանի համայնքապետարանը լուծում է «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15-2-16/29» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ի հետ կնքված «ԱԲՀ- ՇՊԱՁՊԲ 15-2-16/29-5/2», «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15-2-16/29-6/2», «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15-2-16/29-7/2», «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15-2-16/29-8/2», «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15-2-16/29-9/2», «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15-2-16/29-10/2», «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15-2-16/29-12/2» ծածկագրերով պայմանագրերի թիվ 31 և 32 չափաբաժինները: Միաժամանակ տեղեկացվել է, որ պարտավոր է նշված ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում Աբովյանի թվով 9 մանկապարտեզների հաշվեհամարներին փոխանցել ընդհանուրը՝ 1.177.410 ՀՀ դրամ տուժանք, որպես պայմանագրերի կատարման ապահովումներ թիվ 31 և 32 չափաբաժիններով չմատակարարված ապրանքի ընդհանուր գումարի 10 տոկոսը: ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կարեն Թամազյանը հայտնել է, որ պայմանագրի լրիվ կամ մասնակի լուծելու դեպքում Ընկերությունից որպես տուժանք գանձվող գումարի չափը պետք է կազմի ոչ թե լուծված պայմանագրի տվյալ չափաբաժնի 10 տոկոսը, այլ պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը:

Ընկերությունը գտնում է, որ որևէ անբարեխիղճ վերաբերմունք չի դրսևորել, ժամանակին կատարել է մատակարարումը, որը համապատասխանել է թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերքի չափանիշներին: Աբովյանի քաղաքապետարանի կողմից անհիմն և առանց հավուր պատճառաբանության միակողմանի լուծվել է Աբովյանի մանկապարտեզների և «Դեագա» ՍՊԸ-ի միջև կնքված սննդամթերքի մատակարարման պայմանագրերի թիվ 31 և 32 չափաբաժինները այն դեպքում երբ՝

1. Փորձաքննության եզրակացություն կազմելիս չի պահպանվել օրենքի պահանջը՝ փորձագետին չի նախազգուշացվել սխալ կամ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված պատասխանատվության մասին, ուստի եզրակացությունը կասկածահարույց է և չի կարող հանդիսանալ պատշաճ փաստաթուղթ:

2. Ընկերությանը չի հայտնվել նշանակվելիք փորձաքննության մասին, վերջինը զրկված է եղել փորձաքննությանը ներկա գտնվելու և դիրքորոշում հայտնելու հնարավորությունից:

3. Փորձաքննությունը կատարվել է՝ ոչ թե տավարի փափուկ միսը մատակարարելու օրը, այլ հաջորդ օրը, հետևաբար կասկածահարույց է, այն հանգամանքը, թե արդյոք փորձաքննության ներկայացված միսը Ընկերության կողմից մատակարարված միսն էր:

4. Քանի որ փորձաքննության է ուղղարկվել տավարի փափուկ միսը, իսկ տավարի ոսկրոտ միսը փորձաքննության եզրակացություն չի եղել, համայնքապետարանը իրավունք չուներ լուծելու տավարի ոսկրոտ մսի չափաբաժնի վերաբերյալ կնքված պայմանագիրը:

5. Փորձաքննության է ներկայացվել թվով 2 մանկապարտեզներին մակատարարված տավարի փափուկ միսը, մյուս մանկապարտեզներին մատակարարված ապրանքի վերաբերյալ եզրակացություն չկա, ուստի կրկին ենթադրության հիմքով քաղաքապետարանն իրավունք չուներ լուծելու մնացած 7 մանկապարտեզների հետ կնքված պայմանագրերը:

6. Համաձայն կողմերի միջև կնքված պայմանագրի 3.1.2 կետի՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի ապրանք, գնորդն իրավունք ունի՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով՝ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ: Համաձայն նույն պայմանագրի 3.1.4 կետի բ ենթակետի՝ եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, գնորդն իրավունք ունի հրաժարվել հանձնված ապրանքն ընդունելուց, մինչդեռ գնորդը ոչ միայն չի օգտվել պայմանագրով իրեն վերապահված իրավունքից՝ չի պահանջել որպեսզի անպատշաճ որակի ապրանքը փոխարինվի պատշաճ որակի ապրանքով, կամ չի հրաժարվել ապրանքն ընդունելուց, այլ տևական ժամանակ շարունակել է Ընկերությունից գնել ինչպես տավարի փափուկ, այնպես էլ ոսկրոտ միս, դրա դիմաց կատարելով համապատասխան վճարումներ:

7. Պայմանագրի 3.2.3 կետի համաձայն՝ գնորդը պարտավոր է՝ պայմանագրով նախատեսնված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքը ընդունելու դեպքում վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարը: Եթե վաճառողի կողմից թույլ տրվեր պայմանագրի որևէ կետի խախտում, ապրանքը ժամանակին չմատակարարվեր կամ անորակ ապրանք մատակարարվեր, ապա բնական է, որ գնորդը չէր կատարի ձեռք բերված ապրանքի դիմաց վճարումը:

8. ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի 8-րդ կետի

համաձայն՝ պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, որ այդ 10 տոկոսը վերաբերվում է պայմանագրի ընդհանուր գնին, թե կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով պայմանագիրը լուծելու և այդ չափաբաժնի գնի 10 տոկոսին, ուստի օրենքի բացը չի կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության: Առավել ևս, որ պայմանագրի լուծումը պայմանավորված չէ Ընկերության մեղքով, վերջինը պատշաճ կատարել է իր վրա դրված պարտավորությունը: Պայմանագրի լուծումը քաղաքապետարանի կամայական վարքագծի արդյունք է:

Ընկերությունը՝ 18.07.2017թ. ի լրումն ներկայացված բողոքի, հայտնել է հետևյալը.

Թիվ 2 և 3 մանկապարտեզների ներկայացուցիչները Խորհրդի 14.07.2017թ. նիստի ընթացքում հաստատեցին, որ ապրանքը ընդունելիս այն բացել և հանել են պոլիէթիլային տոպրակից, միսը եղել է անհոտ, գույնը եղել է լավը, յուղայնությունը նորմալ, միսը չի եղել չորացած, տեսքը եղել է լավը: Ապրանքը ընդունելուց հետո այն մշակել են և դրել սառնարանը սառեցման համար: Մսի մշակման ընթացքում որևէ արտասովոր բան չեն նկատել: Ապրանքի հետ միասին հանձնվել է նաև բժշկի տեղեկանքը համաձայն որի միսը եղել է թարմ:

Թիվ 3 մանկապարտեզի ներկայացուցիչը Խորհրդի նիստի ընթացքում հավաստեց, որ 20.02.2017թ. Ընկերությունը մատակարարել է 7կգ. միս: Մանկապարտեզը բացի այդ օրը մատակարարված մսից, ունեցել է նաև նախորդ շաբաթվա մատակարարված մսից 3կգ.:

Մյուս մանկապարտեզների ներկայացուցիչները հայտարարեցին, որ մատակարարված միսը եղել է նորմալ որակի:

Համադրելով թիվ 2 և 3 մանկապարտեզների ներկայացուցիչների ելույթները պարզվեց հետևյալը՝

1. Ընկերության կողմից 20.02.2017թ. մատակարարված մսի որակից և քանակից որևէ տնտեսվար չի բողոքել, որևէ պահանջ չի ներկայացրել:

2. Մատակարարված միսը բացվել է, հանվել պոլիէթելենային տոպրակներից գույնը եղել է լավը, յուղայնությունը նորմալ, միսը չի եղել չորացած, տեսքը եղել է լավը:

3. Մատակարարված միսը մշակվել և դրվել է սառնարան սառեցման նպատակով:

4. Թիվ 3 մանկապարտեզում նախկինում մատակարաված մսից գոյացել է 3կգ., որը ըստ էության պահվել է Ընկերության կողմից մատակարարված թարմ մսի հետ:

5. Փորձաքննության է ուղղարկվել 900գ. սառեցված միս:

Ընկերությունը հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությանը մասնակից չեն դարձրել փորձաքննության կատարմանը, գտնում է, որ հնարավոր է փորձաքննության է ուղղարկվել՝ ոչ թե մատակարարված թարմ միսը, այլ անհայտ ծագմամբ միս:

Ընկերությունը գտնում է, որ եթե մատակարարվեր անորակ միս, մանկապարտեզի տնօրենները այն չէին ընդունի և դրա դիմաց վճարում չէին կատարի, հանձնման-ընդունման արձանագրություն չէին կազմի: Եթե մատակարարված ապրանքը չի համապատասխանել տեխնիկական բնութագիրն, ինչու է ապրանքն ընդունելուց հետո մանկապարտեզի տնտեսվարները «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի վերաբերյալ հարցման փաստաթղթի տակ իրենց անուն ազգանուններով և ստորագրություններով մատակարարված ապրանքի վերաբերյալ հայտնել դրական կարծիք:

Մատակարարված ապրանքի որակը չի համապատասխանել սահմանված վավերապայմաններին, ապա ինչու Պատվիրատուն անմիջապես հետամուտ չի եղել պայմանագրի միակողմանի լուծմանը, այլ շարունակել ապրանքի ձեռքբերումը, կատարելով համապատասխան վճարումներ:

Պատվիրատուն շաբաթներ անց որոշել է լուծել Ընկերության հետ կնքած պայմանագրերը, թեպետ վաղուց ունենալով փորձաքննության բացասական եզրակացությունը:»:

Ընկերությունը գտնում է, որ Աբովյանի համայնքապետարանի բերած փաստարկներն անհիմն են, չեն բխում ինչպես կողմերի միջև կնքված պայմանագրից, այնպես էլ գործող օրենսդրությունից:

Ընկերությունը, ղեկավարվելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով՝ Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝ դադարեցնել ՀՀ Աբովյանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/29» ծածկագրով ընթացակարգի 31 և 32 չափաբաժիններով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 09.03.2017թ. թիվ Ե-519 որոշումը, ինչպես նաև չեղյալ հայտարարել Աբովյանի քաղաքապետարանի կողմից 12.04.2017թ. հայտարարված մրցույթը:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «Դեագա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հարություն Գուլոյանը, Սամվել Շարբափյանը, Դանիել Ղասաբողլյանը, Հասմիկ Հարությունյանը, Արմինե Ղասաբողլյանը:

2. ՀՀ Աբովյանի համայնքապետարան կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ Աբովյանի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.07.2017թ. թիվ Ե-1761 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Աբովյան համայնքի մանկապարտեզների 2017 թվականի կարիքների համար սննդամթերք ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15-2-16/29» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որտեղ 21 չափաբաժիններով, այդ թվում՝ փափուկ և ոսկրոտ մսերի մասով, հաղթող է ճանաչվել «Դեագա» ՍՊԸ-ն: Գնման ընթացակարգը կազմակերպել է Աբովյանի համայնքապետարանը կենտրոնացված ձևով: Մատակարարվող մսի որակի հետ կապված բազմաթիվ բողոքներից հետո Աբովյանի համայնքապետարանը 21.02.2017 թվականին գրավոր դիմել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ մանկապարտեզներին մատակարարվող միսը անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկելու համար: Քանի որ բոլոր մանկապարտեզներում «Դեագա» ՍՊԸ-ն էր մատակարարում միսը, հետևաբար վերը նշված ՊՈԱԿ-ի աշխատակիցները 21.02.2017 թվականին նմուշառում են կատարել պատահական սկզբունքով ընտրված N 2 և N 3 մանկապարտեզներին մատակարարված մսից: Քանի որ փորձաքննությունից հետո անմիջապես հնարավոր չէր պայմանագիրը միակողմանի լուծել և մանկապարտեզների նախապես կազմված ճաշացուցակներում նախատեսված էին մսով ուտեստներ, հետևաբար այդ ընթացքում մանկապարտեզները չէին կարող չստանալ տավարի միս: Անասնաբուժական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո, որտեղ նշված էր, որ փորձաքննության վերցված մսամթերքը պիտանի չէ սննդում օգտագործելու համար, 28.02.2017 թվականին «Դեագա» ՍՊԸ-ին գրավոր տեղեկացվել է խնդրի մասին, ներկայացվել է փորձաքննության եզրակացությունները և տեղյակ պահվել ՀՀ ֆինանսների նախարարության հետ խնդրին օրենքով սահմանված կարգով ընթացք տալու մասին: Վերը նշված բոլոր գործողությունների վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն: Նախարարության կողմից պարզաբանում ստանալուց հետո 09.03.2017 թվականին «Դեագա» ՍՊԸ-ն փոստով և էլեկտրոնային տարբերակով

պատշաճ ծանուցվել է պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելու մասին: Բոլոր պայմանագրերը միակողմանի մասնակի լուծվել են՝ հաշվի առնելով երեխաների առողջությանը սպառնացող հնարավոր վտանգը և այն հանգամանքը, որ բոլոր մանկապարտեզներում նույն կազմակերպությունն է մատակարարում տավարի միս:

Այնուհետև կազմակերպել է գնման նոր ընթացակարգ և 27.04.2017 թվականին կնքվել են նոր պայմանագրեր: Վերը նշված գործողություններին և գրություններին ի պատասխան «Դեագա» ՍՊԸ-ն ոչ մի առարկություն չի ներկայացրել: Պատվիրատուն 08.06.2017 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությունից գրավոր պարզաբանում է խնդրել տուժանքի մասին համաձայանագրերին օրենքով սահմանված կարգով ընթացք տալու վերաբերյալ: Պարզաբանումը ստանալուց հետո «Դեագա» ՍՊԸ-ին գրավոր տեղեկացվել է «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15-2-16/29» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի պայմանագրի տուժանքի մասին համաձայնագրերը և կից վճարման պահանջագրերը իրենց կազմակերպությանը սպասարկող բանկին ներկայացնելու վերաբերյալ և 21.06.2017 թվականին նշված փաստաթղերը ներկացվել են «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Շենգավիթ» մասնաճյուղ՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար:»:

Պատվիրատուն՝ ի լրումն ներկայացված դիրքորոշման, 14.07.2017թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«06.07.2017թ. «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք, որով ընկերությունը պահանջում է չեղյալ համարել Աբովյանի համայնքապետարանի 09.03.2017թ. № Ե-519 որոշումը ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/29 ծածկագրով պայմանագրի 31-րդ և 32-րդ չափաբաժինների մասով լուծարելու վերաբերյալ, ինչպես նաև չեղյալ համարել 12.04.2017թ. մրցույթը և շարունակել ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/29 ծածկագրով պայմանագիրը բոլոր չափաբաժիններով: Բացի այդ պահանջել է ժամանակավորապես կասեցնել Աբովյանի համայնքապետարանի կողմից ընկերության բանկ ներկայացվող տուժանքի համաձայնագրին կից, որպես պայմանագրի ապահովման մաս հանդիսացող վճարման հանձնարարականների միջոցով բռնագանձումը՝ մինչև խորհրդի որոշումը:

Պատվիրատուն գտնում է, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի փաստացի հիմքերը անհիմն են, նպատակ են հետապնդում խուսափելու «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Շենգավիթ» մասնաճյուղ ներկայացված պայմանագրի տուժանքի մասին համաձայնագրերը և կից վճարման պահանջագրերը օրենքով սահմանված կարգով բռնագանձումից:

Պատվիրատուն նշել է, որ բողոքաբերը բողոքի իրավական հիմքեր ընդհանրապես չի նշել, իսկ նշած փաստացի հիմքերը ներկայացրել է իր տեսակետից:

Նախ՝ Աբովյանի համայնքապետարանի 09.03.2017թ. № Ե-519 գրությունը որոշում չէ, ինչպես նշել է բողոքաբերը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի բ կետի համաձայն՝ վարչական բողոքը կարող է ներկայացվել վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում, այն է՝ 09.03.2017թ. № Ե-519 գրությունը «Դեագա» ՍՊԸ-ն պատշաճ կարգով ստացել է 21.03.2017թ. և չի վիճարկել:

Դրանից հետո ընկերությունը 12.04.2017թ. մասնակցել է կազմակերպված գնման նոր ընթացակարգին, սակայն նրա կողմից ներկայացված հայտը մերժվել է և կրկին որևէ առարկություն՝ օրենքով սահմանված կարգով բողոք, չի ներկայացրել:

Բողոքը ներկայացվել է 2017թ. հունիս ամսին, այսինքն բողոքաբերը քաջատեղյակ լինելով բոլոր գործողություններից սպասել է 3 /երեք/ ամիս և միայն, երբ համայնքապետարանը դիմել է բանկ՝ օրենքով սահմանված կարգով վճարման հանձնարարականների միջոցով բռնագանձում կատարելու համար, այդ ժամանակ որոշել է բողոք ներկայացնել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով սահմանված է խորհուրդ բողոքարկելու կարգը և նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է նույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում, իսկ եթե գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ բողոքը կարող է ներկայացվել խորհուրդ՝ գնումների ընթացակարգի շրջանակներում, մինչդեռ տվյալ պարագայում բողոքարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հանգամանքը:

Բողոքաբերի կողմից նշված այն պատճառաբանությունը, թե Աբովյանի մանկապարտեզների պատասխանատու աշխատակիցների կողմից ստորագրվել են հարցման թերթիկներ, ըստ որի ապրանքների որակը /այդ թվում մսի/ գնահատվել է լավ, հայտնում ենք, որ նշված հարցման թերթիկներում նշված չէ կոնկրետ ապրանքի տեսակը /վերը նշված թերթիկները ստորագրած անձինք հայտարարում են, որ նման նշագրում կատարել են այն ապրանքների մասով, որոնք հնարավոր է գնահատել անզեն աչքով/,

բացի այդ մսի որակը հնարավոր չէ որոշել միանգամից /այսինքն ընդունման պահին, այն կարող է ի հայտ գալ մշակման պրոցեսում/:

Պատվիրատուն՝ միայն երկու մանկապարտեզների մասով նմուշառման և եզրակացություն տալու վերաբերյալ հայտնել է, որ փորձագետներին ասվել է, որ բոլոր մանկապարտեզներում է առկա մսի որակի կասկած, ինչի համար նրա կողմից պատահականության սկզբունքով է վերցվել առաջին երկու մանկապարտեզներից:

Աբովյանի բոլոր մանկապարտեզների համար նախատեսված ողջ մսի չափաբաժինը կարող էր ընդունվել համայնքապետարանում և բաժանվեր մանկապարտեզներին և ի դեպ՝ անասնաբույժի եզրակացությունը տրվում է ողջ չափաբաժնի մասով, այլ ոչ առանձին-առանձին մանկապարտեզների համար: Հետևաբար պետք չէ տարբերակել կամ տարանջատել մանկապարտեզներին:

Պատվիրատուն գտնում է, որ միսը մատակարարվում է մանկապարտեզ հաճախող երեխաների համար և վտանգը կարող է անդառնալի ազդեցություն ունենալ, ինչի պատճառով և միակողմանի լուծվել է բոլոր մանկապարտեզների հետ կնքված պայմանագրերը:

Այն մասին, թե ինչպես որոշ ժամանակ հետո միսը ընկերության կողմից շարունակվել է մատակարարվել, հայտնում ենք, որ նախ գնումների ընթացակարգի համապատասխան այն հնարավոր չէ անհապաղ լուծել և կազմակերպել գնումների նոր ընթացակարգ, բացի այդ համայնքապետարանի կողմից հետագա անգամներին մատակարարված մսի որակը ստուգվել է, այն է՝ մշակվելուց, եփվելուց հետո փորձարկվել է անձնակազմից որևէ մեկի կողմից, որից հետո նոր տրվել երեխաներին:

Բողոքաբերի այն հարցադրմանը, թե նմուշառումը կատարվել է առանց իր ներկայացուցչի ներկայության և հայտնի չէ ինչ պայմաններում է պահվել միսը և այլն, Պատվիրատուն գտնում է, որ հարցադրում չի եղել այն մասին, թե ինչ միս է իրենց կողմից ներկայացվում անասնաբույժին և տրվում եզրակացություն ու ինչ են մատակարարում, այսինքն այդ հանգամանքը կասկածի տակ չի դրվում:

Վերը նշված փաստերը կարող են հիմնավորել պատասխանատու ստորաբաժանումների ներկայացուցիչները:

Բացի վերը նշվածը պետք է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ արդեն 2017թ. ապրիլ ամսից Աբովյանի մանկապարտեզներին միսը մատակարարում են այլ ընկերություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Խորհուրդը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է խորհրդի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Տվյալ բողոքը նախքան պայմանագրի կնքումը չի ներկայացվել, ինչպես նաև վիճարկվող պայմանագրերի 9.10 կետի համաձայն՝ պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն չեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով, հետևաբար տվյալ վեճը քաղաքացիաիրավական հարաբերություն է և ենթակա է /ընդդատյա է/ լուծման դատական կարգով:»:

Վերոգրյալի հիման վրա Պատվիրատուն գտնում է, որ ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա չէ քննության ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կամ հակառակ դեպքում ենթակա է մերժման և անհրաժեշտ է «Դեագա» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Խորհրդի նիստերին մասնակցում էին ՀՀ Աբովյանի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝ Զոհրաբյան Տաթևիկը, Գուլոյան Մեսրոպը և Սարգսյան Ջանինան:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուդն ուսումնասիրել է «Դեագա» ՍՊԸ-ի կողմից 06.07.2017թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի 07.07.2017թ. թիվ Ե-1761 և 14.07.2017թ. ներկայացրած գրությունները, «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/29» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, Պատվիրատուի և «Դեագա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած դիրքորոշումները և կարծիքները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

Խորհուրդն արձանագրում է, որ «Դեագա» ՍՊԸ-ի կողմից 06.07.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքում նշված պայմանագիրը կնքվել է մինչև «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) ուժի մեջ մտնելը, հետևաբար Խորհուրդը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն) 57-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներով, գտնում է, որ նշված օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել ՀՀ Աբովյանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/2-16/29» ծածկագրով ընթացակարգի 31 և 32 չափաբաժիններով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 09.03.2017թ. թիվ Ե-519 որոշումը, ինչպես նաև չեղյալ հայտարարել Աբովյանի քաղաքապետարանի կողմից 12.04.2017թ. հայտարարված մրցույթը՝ որպես իրավական հիմք նշելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-206-Ն) 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-206-Ն) 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Խորհուրդը գտնում է, որ բողոքով ներկայացված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը դուրս է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-206-Ն) 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված Խորհրդին վերապահված լիազորությունների շրջանակից:

Ինչ վերաբերում է Աբովյանի քաղաքապետարանի կողմից 12.04.2017թ. հայտարարված ընթացակագը դադարեցնելու պահանջին, ապա Խորհուրդը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ չեն ներկայացվել նշված ընթացակարգը գնումների մասին ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանելու մասին ապացույցներ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դեագա» ՍՊԸ-ի կողմից 06.07.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ